Արձանագրություն N 18/6-3

"ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/6" ծածկագրով ARMEPS համակարգի միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի **ամփոփման նիստի**

ք. Երևան 09 ապրիլի 2018թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ+ԳԱ)	Մ. Թաթիկյան,
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Ա. Վարդանյան,
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Պետրոսյան, Գ. Ամատունի,
Հանձնաժողովի քարտուղար (ՄՀմ)՝	Ա. Բաղրամյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը՝

1.1 ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացվող Տեղեկատվության ներկայացում:

1.2 Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:

1.3 Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցի մասին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից սահմանված ժամկետում ստացված Տեղեկատվության վերաբերյալ

2.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 44-րդ կետի համաձայն՝ ըստ 1, 4 և 12 չափաբաժինների առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում

3.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին է ներկայացրել իր կողմից հաստատված, առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը՝ Հրավերի հավելվածներ NN 6 և 6.1: Ապրանքների ամբողջական նկարագիրը համապատասխանում է Հրավերով սահմանված՝ գնման առարկաների տեխնիկական բնութագրին:

4. Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

4.1 ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/6 ծածկագրով գնման ընթացակարգի 1, 4 և 12 չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

4.2 Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակցի իրական շահառուների մասին տվյալները:

4.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետը կազմում է 5 օրացուցային օր:

4.4 Չափաբաժիններ 7,8,9,10,11-ի գծով միակ մասնակից «ԴԵԼՏԱ» ՍՊԸ-ի առաջարկած գները գերազանցում են Պատվիրատուի գնումների պլանով սահմանված գները. Նշված մասնակիցը հրաժարվել է բանակցել գների իջեցման շուրջ, ուստի նրա ներկայացրած հայտը մերժել՝ Գնումների մասին ՀՀ օրենքի հոդված 37-ի 1 կետի 1-ին մասի հիմքով և նշված չափաբաժինները հայտարարել ՉԿԱՅԱՑԱԾ:

4.5 Չափաբաժիններ 2,3,5,6 – հայտարարել ՉԿԱՅԱՑԱԾ՝ Գնումների մասին ՀՀ օրենքի հոդված 37-ի 1 կետի 3-րդ մասի հիմքով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Թաթիկյան

Անդամներ՝ _____ Ա. Վարդանյան

_____ Գ. Ամատունի

_____ Ա. Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Բաղրամյան